

Նենգի մը եւ ծովահէնի մը, միաժամանակ: Տասներեքերորդ վեպիս նիւթն էր ոստիկան մը եւ գող մը, որոնք սիրահարուած են միեւնոյն կնոջ: Տասնըջորորդ վեպիս նիւթն էր դատական նախարարի մը աղջիկը, որ սիրահարուած է գողի մը եւ նոյն գողին տղուն:

-Ձեր յաջորդ վեպին նիւթը ի՞նչ պիտի ըլլայ...

-Խիստ ինքնատիպ բան մը: Ոստիկան մը, որ սիրահարուած պիտի ըլլայ գողի մը...

-Ի՞նչ...

-Կամ գող մը, որ սիրահարուած է ոստիկանի մը...

-Իսկ անկէ վերջը գալիք վեպին նիւթը...

-Չգայացունց բան մըն է: Երկու գաղտնի ոստիկան եւ երկու աւագակ՝ սիրահարուած մէկը միւսին կնոջ: Այսպէս՝ առաջին գողը սիրահարուած է երկրորդ ոստիկանին կնոջը, երկրորդ գողը սիրահարուած է առաջին գողին կնոջը: Իսկ չորս կիները, իրենց կարգին, սիրահարուած են մարդու մը՝ աշխարհահռչակ կռփամարտիկի մը: Կիներուն սերը մեջտեղ կ'ելլէ ու երկու ոստիկաններն եւ երկու գողերը դաշնակցած, նեղ տեղ մը, կը բռնեն կռփամարտիկը: Ահռելի կռիւ: Կռփամարտիկը չորս հոգիի դէմ ու յաղթական է: Վերջին պահուն, սակայն, գետինը տապալած գողերէն մին, դժուարաւ ոտքի ելլելով, շիշ մը կը զարնէ կռփամարտիկին գլխուն, որ զգայագիրկ կ'իյնայ գետին: Միւսները անմիջապէս կը բռնեն մարտիկը ու կը նետեն գետը: Կռփամարտիկը ունէր սիրուհի մը, որ շարժանկարի նշանաւոր դերասանուհի մըն է: Արուեստագիտուհին կը փնտռէ ու փնտռել կուտայ իր սիրահարը ամիսներով: Միլիոններ կը ծախսէ, ահագին իրարանցում, հետքեր, կասկածներ, խորհրդաւորութիւն, խուզարկութիւն եւ, սակայն, ոճրագործները չեն բռնուիր: Օր մը դերասանուհին ծովուն մէջ լողացած պահուն՝ դիպուածով կը գտնէ իր սիրահարին դիակը: Գաղտնի ոստիկանուհիի մը նման ինք կը լծուի գործի՝ օգնական առնելով քանի մը վարժ գաղտնի ոստիկաններ, որոնց մէջ է նաեւ ոճրագործ ոստիկաններէն մին: Ու դաւադրութիւն: Ոստիկանը օր մը բլուրի մը վրայէն վար կը հրէ դերասանուհին, որ կ'իյնայ եւ կը ջախջախուի ժայռերու վրայ: Այդ միջոցին դերասանուհիին եղբայրը, Աւստրալիայէն վերադարձած ըլլալով, գործի կը լծուի եւ ոճրագործ